№ 46 Մարտի 13 (25) 1881 Մարտի 13 (25) № 46

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլ. կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Ստորագրագրողից գնում են ուզածի
Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Ցայտարարութիւնների համար. վճարում են
իրատանիր բառի 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Գաղաթական տեսութիւն։ Ամերիկա։ Գերմանիա։ Ֆրանսիա։ Իտալիա։ Թիւրքիա։ Արտաքին լուրեր։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դաւիթ բէկ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՑԻՑ

Մարտի 1-ին

Դեռ անցեալ տարի «Մշակի» մէջ մենք մի քանի անգամ մի երկու խօսք ասել Լազարեան ճեմարանի երեկոյի, աշակերտական ժողովայցների առթիւ։ Ի միջի այլոց՝ մենք ուշադրութիւն էինք դարձնում ներկայացումների վրա, հաճարելով նրանց ամենակարեւոր զուարճութեան միջոցներ այնպիսի ուսումնարանի համար, որի աշակերտների մեծ մասը պանդուխտ լինելով և հանրաբար ամրողջ տարի չորս պատի մէջ մնալով—զուրկ է որ և է հանգիստից, որ և է զուարճութիւնից։ Եւ այս հանգիստները մանաւանդ անհրաժեշտ էինք համարում աշակերտների զաստիարակութեան համար, որ զանազան ներկայացումներով ու պարահանդէսներով կարելի է գրաւել զէպի ճեմարան հասարակութիւնը և դրանով արծարծել աշակերտների մէջ այն բարիքար ազդեցութիւնը, որ առհասարակ ընտանիքը կարող է ունենալ ուսումնարանի վրա. զաստիարակութեան գործը անպատճառ պէտք է բաժանվի ուսումնարանի և հասարակութեան մէջ։

Ցայտնի է որ անցեալ մինիստրի (Տոլստոյ) սիստեմն էր՝ ի միջի այլոց՝ և գիմնազիոնների խստաբարոյ—կլասիկական կենցաղավարութիւնը. և թէպէտ երբեմն թոյլ էր տրվում աշակերտներին զուարճութիւն— ներկայացումներ, բայց այդ ներկայացումները կարող էին լինել միայն կլասիկական լեզուներով. այս conditio sine qua non էր։ Եւ երևակայումեմ թէ մեծ հոգեկան բաւականութիւն էր ստանում աշակերտը (մանաւանդ փոքրը)՝ լսելով Սոֆոկլի, Եւրիպիդի, Զեւսի կամ Տէրէնցիի անվերջանալի եռամերը, տրոխէյները ու հէքսամէտրները, որոնցից նա ասրողջ երեկոյ 5 խօսք էր հասկանում.....

Ինչպէս երևում է՝ ներկայ լուսաւորութեան մինիստրը աւելի պարզ է նայում կրթութեան գործի վրա. ուստի տրա ժամանակ գիմնազիոնի խստաբարոյ-ճգնաւորական կեանքը մի փոքր մեղմացաւ, թեթեւացաւ։

Բարեկենդանի հինգշաբթի օրը (19-ին փետր.) Լազարեան ճեմարանի դահլիճներում մեծ պարահանդէս էր։ Փառը 8-ին երեկոյեան սկսան հաճաքվել հիւրերը. նրանց ընդունում էին վերին դասարանների աշակերտները և հրաւիրում դահլիճ։ Երբ հիւրերը բաւականին ժողովեցան, գիմնազիական երաժշտութիւնը նշեց «Боже царя храни» (այդ օրը Կայսեր գահակալութեան օրն էր) և աշակերտների երգեցիկ խումբը նեղբաշնակ կերգով երգեց այդ նուագը։ Այնուհետև սկսվեց պարահանդէսը։ Մեծ ուռն էր այդ օրը աշակերտների համար. 15 տարուց աւելի է, որ օրիորդների ձայնը չէր թնդացրել ճեմարանի դահլիճները. հապա թող ուրախութիւն, թող բաւականութիւն էր երևում աշակերտների երեսին.... Պարահանդէսը շատ շքեղ էր ամենայն պարագաներով. դահլիճները և նախասենեակները զարդարված էին մեծ աշառանկներով. լուսաւորութիւնը շատ փառաւոր էր. զաստառներում փռած էին գորգեր և գրած էին հարգաւոր կահ-կարասիք։ Պատերից կախված էին մեծագիր պատկերներ. սրանց մի քանիսի ճակատը զարդարած էր դաշտ պատ-

Բոլոր դասերի աշակերտները ունեցան մի երկու խօսք ասել Լազարեան ճեմարանի ընտանեկան երեկոյի, աշակերտական ժողովայցների առթիւ։ Ի միջի այլոց՝ մենք ուշադրութիւն էինք դարձնում ներկայացումների վրա. հաճարելով նրանց ամենակարեւոր զուարճութեան միջոցներ այնպիսի ուսումնարանի համար, որի աշակերտների մեծ մասը պանդուխտ լինելով և հանրաբար ամրողջ տարի չորս պատի մէջ մնալով—զուրկ է որ և է հանգիստից, որ և է զուարճութիւնից։ Եւ այս հանգիստները մանաւանդ անհրաժեշտ էինք համարում աշակերտների զաստիարակութեան համար, որ զանազան ներկայացումներով ու պարահանդէսներով կարելի է գրաւել դէպի ճեմարան հասարակութիւնը և դրանով արծարծել աշակերտների մէջ այն բարիքար ազդեցութիւնը, որ առհասարակ ընտանիքը կարող է ունենալ ուսումնարանի վրա. գաստիարակութեան գործը անպատճառ պէտք է բաժանվի ուսումնարանի և հասարակութեան մէջ։

Ցայտնի է որ անցեալ մինիստրի (Տոլստոյ) սիստեմն էր՝ ի միջի այլոց՝ և գիմնազիոնների խստաբարոյ—կլասիկական կենցաղավարութիւնը. և թէպէտ երբեմն թոյլ էր տրվում աշակերտներին զուարճութիւն— ներկայացումներ, բայց այդ ներկայացումները կարող էին լինել միայն կլասիկական լեզուներով. այս conditio sine qua non էր։ Եւ երևակայումեմ թէ մեծ հոգեկան բաւականութիւն էր ստանում աշակերտը (մանաւանդ փոքրը)՝ լսելով Սոֆոկլի, Եւրիպիդի, Զեւսի կամ Տէրէնցիի անվերջանալի եռամերը, տրոխէյները ու հէքսամէտրները, որոնցից նա ասրողջ երեկոյ 5 խօսք էր հասկանում.....

Ինչպէս երևում է՝ ներկայ լուսաւորութեան մինիստրը աւելի պարզ է նայում կրթութեան գործի վրա. ուստի տրա ժամանակ գիմնազիոնի խստաբարոյ-ճգնաւորական կեանքը մի փոքր մեղմացաւ, թեթեւացաւ։

Բարեկենդանի հինգշաբթի օրը (19-ին փետր.) Լազարեան ճեմարանի դահլիճներում մեծ պարահանդէս էր։ Փառը 8-ին երեկոյեան սկսան հաճաքվել հիւրերը. նրանց ընդունում էին վերին դասարանների աշակերտները և հրաւիրում դահլիճ։ Երբ հիւրերը բաւականին ժողովեցան, գիմնազիական երաժշտութիւնը նշեց «Боже царя храни» (այդ օրը Կայսեր գահակալութեան օրն էր) և աշակերտների երգեցիկ խումբը նեղբաշնակ կերգով երգեց այդ նուագը։ Այնուհետև սկսվեց պարահանդէսը։ Մեծ ուռն էր այդ օրը աշակերտների համար. 15 տարուց աւելի է, որ օրիորդների ձայնը չէր թնդացրել ճեմարանի դահլիճները. հապա թող ուրախութիւն, թող բաւականութիւն էր երևում աշակերտների երեսին.... Պարահանդէսը շատ շքեղ էր ամենայն պարագաներով. դահլիճները և նախասենեակները զարդարված էին մեծ աշառանկներով. լուսաւորութիւնը շատ փառաւոր էր. զաստառներում փռած էին գորգեր և գրած էին հարգաւոր կահ-կարասիք։ Պատերից կախված էին մեծագիր պատկերներ. սրանց մի քանիսի ճակատը զարդարած էր դաշտ

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ԳԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

Ժ.

Կէսորից բաւական անցել էր արդէն։ Ցառերի տուերները դարձել էին դէպի արեւելք։ Սիկան, մեծ պարանի հովուապետը, իր երկայն ցուպը նեցուկ առած նոյնպէս երկայն իրանին, անշարժ արձանի նման կանգնել էր մի բարձրաւանդակի վրա և այնտեղից արծուի աչքերով նայում էր դէպի հեռուն, ուր ուխտաւորների բազմութիւնը դեռ ամրոխվում էր, դեռ խլրտվում էր մատուռի շուրջը։ Կարծես, այդ հեռաւորութիւնից նա որոշում էր բոլոր անձնաւորութիւնները. ճանաչում էր բոլոր երեսները, ասես մէկի հետ խօսում էր. և ասենին ազդուռում էր, ասելով՝ «ողորմած կենայ»... Այդ բարեպաշտական տեսարանը այն ստորնան գրաւել էր ջերմեռանդ հովուին, որ նա ասենին չէր նկատում իր սիրելի ոչխարներին, որոնք նրա շուրջը սփռված, մեծ ախորժակով արածում էին։ Նա տեսաւ մէկին, որ ձորի միջով անցնում էր։

—Դաւիթ, Դաւիթ, գոչեց նա այնպիսի մի ձգական ձայնով, կարծես, նրա ձայնը հաղարաւոր տնչիւնների բաժանվելով, միայն միւսին առաջ մղեցին և հասան մինչև Դաւիթ ականջները, որ բաւական հեռաւորութեան վրա, ձորի միջով գընում էր։

Նա դարձաւ դէպի կոչող ձայնը և տեսաւ հովուապետին բարձրաւանդակի վրա կանգնած. Մի քանի վայրկեան մնաց իր տեղում անշարժ, դժուարանում էր վճռել, արդեօք գնալ նրա մօտ քէ շարունակել իր ճանապարհը, որի որ կողմ տանելը ինքն էլ չը գիտէր։ Նա ուղղեց իր քայլերը դէպի հովուապետը։

—Ո՞րտեղ ես տատանվում նման կորել այսօր, չես երևում, հարցրեց Սիկան իր սովորական քնքշութեամբ.— առաւօտից ես քեզ չեմ տեսել։

Բայց Դաւիթի վրդովված տրամը, նոյն բոպէում հաղիւ քէ կարող էին որ և իցէ ուրախութիւն պատճառել իր բարեկամի քնքշութիւնները. նա ոչինչ չը պատասխանեց։

—Հասկանում եմ... շարունակեց հովուապետը խորհրդաւոր ձայնով.—գնացել էիր ազջիկներին մոտիկ տալու, հա... հասկանում եմ... ես էլ քո հասակում ազջիկներից պակ չէի դուրս։

—Ես ոչ մի տեղ չեմ գնացել, պատասխանեց պատանին, և նստեց մի քարի վրա, այժմ միայն զգալով, որ ասասիկ յոգնած է։

Հովուապետը նոյնպէս նստեց նրա մօտ նոյն քարի վրա։

—Ի՞նչպէս ոչ մի տեղ չես գնացել, հարցրեց նա,—մինչ դու չը գնացիր համբուրելու։

—Չը գնացի, պատասխանեց պատանին անուշադիր կերպով և սկսեց նայել բազմաթիւ կարմիր պղպջակների վրա, որոնց սև բծերը աւելի էին հեռաւորցրում նրան, քան հովուապետի հարց ու փորձը։

—Դու չը գնացիր համբուրելու, կրկնեց հովուապետը այժմ բաւական բարկացած կերպով,—ուրեմն դու վրացու Աստուածը, վրացու Ցիսուս Քրիստոսը, վրացու Խաչն ու Աստուածածնը չես ընդունում։

Վերջին հարցերը շարժեցին պատանու ծիծաղը։

—Ընդունում եմ, պատասխանեց նա.—վրացու Աստուածը, Ցիսուս Քրիստոսը, Խաչն ու Աստուածածնը, մի և նոյնն է, ինչ որ հայերինն է։

—Ի՞նչպէս քէ մի և նոյն է. վրացու Աստուածը ուրիշ է, հայինը ուրիշ է. վրացու Քրիստոսը ուրիշ է, հայինը ուրիշ է։

—Վրացու Աստուածը վրացի է, հայինը հայ է, նրա խօսքը կտրեց պատանին ծիծաղելով։

—Լաւ, ինչ ես կարծում, դրուստ այդպէս է, ասաց հովուապետը, զարմանալով պատանու լաւ բացատրութեան վրա.—վրացու Աստուածը վրացի է, հայինը հայ է. եթէ չես հաւատում, գնա մեր տէրտէրից հարցրու, նա էլ այդպէս կասի։

—Դիտեմ, որ նա էլ այդպէս կասի... պատասխանեց պատանին, աչխատելով վերջ տալ հովուի ատատաւածաբանական քննութիւններին, որոնցնեան նրա ուշադրութիւնը դարձաւ այդ բոպէում դէպի ձորը, որտեղից անց էին կենում մի խումբ ազջիկներ։ Նա վեր կացաւ։

—Ո՞ւր ես գնում, հարցրեց հովուապետը։

—Գնում եմ համբուրելու... ասաց պատանին ժպտելով. և աչքի ատկով հետեւելով ազջիկների խումբին։

Հովուապետը հարած իւղի տեղ ընդունելով պատանու խօսքը, և չը հասկանալով նրա երկդիմի իմաստը, կարծեց, թէ իրան արդէն յաջողվեցաւ վրացու հաւատքի բերել իր անհաւատ օգնականին, և ֆանատիկոսի ուրախութեամբ գրկելով նրան, ասաց.

—Դնա, զաւակս, գնա համբուրիր, ես այստեղ ոչխարները կը պահեմ. թէ փոշ չունես, փոշ էլ կը տամ քեզ. մի գոյդ մամ առ, վարիր տեղանի վրա։

Այս ասելով, հովուապետը հանեց իր մախաղի միջից մի քանի սև փոշ և տուեց պատանուն։ Դաւիթը շնորհակալութեամբ ընդունեց փոշը և դիմեց դէպի մատուռը։ Անցնելով ձորը, նա դուրս եկաւ Նեղ ճանապարհի վրա, որ տանում էր դէպի ուխտատեղը։ Ճանապարհի վրա ոչ ոք չը կար. նա տեսաւ մի գուացած մուրացկան, որ ծնկների ու ձեռքերի վրա սողալով, քարշ էր գալիս դէպի ուխտաւորները։

—Ո՞ր կողմից, եղբայր, հարցրեց նրանից պատանին։

—Քաղաքից, պատասխանեց մուրացկանը և շարունակեց սողալ։

—Ի՞նչու այդպէս ուշ, հարցրեց պատանին, ատատիկ իզմանարութեամբ։

—Այդ ոտներով շատ հեռուն չես գնայ, ասաց մուրացկանը, ցոյց տալով ատատակից չինված հոգաթափները, որ հագել էր ձեռքերի թաթերի վրա։

Պատանին ձգեց նրան հովուապետից ստացած սև փոշերը և հեռացաւ։ Նա դուրս եկաւ դէպի մատուռը տանող նեղ ճանապարհից և մտաւ այն ձորի մէջ, որ կողմից մի քանի բոպէ առաջ անցաւ ազջիկների խումբը։ Նրանք շատ չէին հեռացել. ասես մի ծաղիկ, ասես մի թիթեռնիկ, ասես մի վառակ իր պայծառ, ուրախաձայն հոտանքով գրաւում էր, հրապուրում էր, նրանց իր մօտ էր կանչում։ Պատանին այժմ այնքան մօտացել էր, որ կարողանում էր հեռուից ճանաչել նրանց։ Թամարը Սալոմէի հետ առանձնացած, գնում էին բոլորովին բաժանված ամբողջ խմբից։ Պատանին, կարծես, լսում էր նրանց ձայնը և հասկանում էր նրանց խորհրդաւոր քրքիջները։ Բայց խակապէս նա ոչինչ չէր լսում. միայն նրա սրտում խօսում էր Թամարի աչքը։ Նա մտաւ թուփերի մէջ, որ չը նկատվի։ Սկսեց մի կողմից կամաց-կամաց հետեւել նրանց։ Թէպ մացառների միջով անցքը բաւական դժուարին էր։ Նա չէր նկատում, թէ որպէս պատառատվում էր իր հագուստը. նա չէր զգում, թէ որպէս թփերի փշաց ատատները զարկվում էին իր երեսին։ Նա երջանիկ էր և գոհ, որ գտնէ հեռուից տեսնում է Թամարին։

Ազջիկների խումբը դիմում էր դէպի կուրի ափը. այդ ձորը տանում էր ուղիղ դէպի գետի կողմը։ Նրանք ցանկանում էին նայել յորդացած գետի վրա, ցանկանում էին տեսնել, թէ որքան բարձրացել է այս տարի կուրը։ Ի՞նչ զուարճութիւն էին գտնում հեղեղատի պրդ-